ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԲԱՅԱԶԵՎԵՐԻ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԽԱՉԱՏՐՅԱՆ Լ. Մ.

Լեզվի իմաստակիր միավորները կարելի է ներկայացնել հատուկ բանաձևերով, որ ընդունված է անվանել լեզվական կաղապար. դրանք ունեն մեկից ավելի իմաստակիր ձևույթներ, որոնք մտնում են ընդհանուր կառուցվածքային մեկ մոդելի մեջ: Հետևաբար լեզվական կաղապարները որոշակի բնագավառների մոդելներ են, որտեղ ցույց է տրվում տվյալ կառուցվածքի բաղադրիչների դասավորությունը, որից էլ բխեցվում են նրանց իմաստային-քերականական կապերը:

Լեզվական կաղապարները բառերի կամ բառաձևերի որոշակի կարգերի հետևողական շարքեր են, որոնք միմյանցից տարբերվում են այդ կարգերի քանակով, դիրքով և պարտադրականությամբ: Կաղապարային բանաձևերում կաղապարը կազմող կարգերի քանակը և դիրքը նշանակվում են համապատասխան ցուցիչների (տառանշանների) քանակով և դիրքով, իսկ պարտադրականությունն ու ոչ պարտադրականությունը՝ փակագծերի բացակայությամբ և առկայությամբ[1]:

Լեզվական կաղապարները դիտվում են նաև որպես արհեստականորեն ստեղծված իրական կամ մտացածին «նմուշ», «տեսակ», «բանաձև», «հարացույց» կամ «կառուցվածք», որոնք իրենց բնույթով (վարքագծով) վերարտադրում են լեզվական (բնական, իրական) կառուցվածքների բնույթը՝ սովորաբար պարզեցված ձևով[2]:

Հետևաբար կարելի է կազմել ինչպես լեզվական որևէ մակարդակային միավորի, այնպես էլ բայական համակարգի վերլուծական ձևերի կաղապարները:

Բայի խոնարհման հարացույցի կաղապարները ամբողջապես ստանալու համար անհրաժեշտ է համադրական ձևերի կաղապարներից բացի, որոշել նաև նրանց (բայերի) վերլուծական ձևերի հնարավոր քանակը: Այդ դեպքում է միայն հնարավոր ստանալ բայական կանոնավոր հարացուցային ձևերի լիարժեք կաղապարներն ու մասնակաղապարները:

Բայական համակարգում վերլուծական ձևերը կազմված են տարանջատ (գրվող) երկու բաղադրիչներից, որոնցից մեկը դիմավոր բայաձև է, մյուսը՝ բայական անդեմ ձև կամ դերբայ: Դերբայ + օժանդակ բայաձև կազմությունները դիտվում են

---

[1] **Ջահուկյան Գ.,** *Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, էջ 11:*

[2] *Лингвистический энциклопедический словарь, М., 1990, с. 304-305.*

վերլուծական բայաձևեր, որոնք շարահյուսական մակարդակում կատարում են պարզ ստորոգյալի գործառույթ:

Առաջին հայացքից թվում է՝ բավական պարզ կառուցվածք ունեն վերլուծական ձևերը: Մինչդեռ հարցն այնքան էլ հստակ չէ. դա պայմանավորված է մի քանի հանգամանքով: Նախ, ո՛ր դերբայներն են օժանդակ բայի հետ կազմում դիմավոր-վերլուծական ձևեր, երկրորդ՝ վերլուծական համարվող այդ ձևերում ո՛րն է բայական (ձևաբանական) հիմքը, երրորդ՝ արդյո՛ք միայն օժանդակ բայն է դերբայական ձևերի հետ կազմում վերլուծական ձևեր:

Առաջին հարցադրումը սպառիչ լուծում է ստացել հայ քերականագիտության մեջ: Նախ, հասկանալի է, որ հայերենի դերբայները (անդեմ ձևերը) բաժանվում են կախյալ, անկախ և երկարժեք դերբայական խմբերի:

Անկախ դերբայները հանդես են գալիս շարահյուսական որոշակի պաշտոնով և օժանդակ բայի հետ կազմում են բաղադրյալ ստորոգյալ (ոչ դիմավոր արժեքով): Այդպիսին են անորոշ և ենթակայական դերբայները (հմմտ. խաղալ եմ և խաղացող եմ ոչ խոնարհվող ձևերը):

Կախյալ դերբայները գործառապես կախում ունեն օժանդակ բայից, առանց վերջինիս խոսքի մեջ հանդես գալ չեն կարող, և երկուսը միասին կազում են բայական պարզ ստորոգյալ՝ դիտվելով բայական վերլուծական ձևեր: Այդպիսի գործառույթ ունեն անկատար (խաղում եմ), կատարելի կամ ապակատար (խաղալու եմ), վաղակատար (խաղացել եմ), ժխտական (չեմ խաղա) դերբայները:

Երկարժեք դերբայները հանդես են գալիս երկգործառույթ դերով. կարող են մասնակցել թե՛ եղանակային ձևերի կազմությանը, թե՛ հանդես գալ ինքնուրույն շարահյուսական արժեքով: Այդպիսին են հարակատար դերբայը՝ վիճակ ցույց տվող բայերի դեպքում (նստած եմ) և համակատարը՝ երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերի կազմության մեջ (գրելիս եմ լինում). այս գործածությամբ տվյալ դերբայները կազմել են դիմավոր-վերլուծական բայաձևեր: Անկախ արժեքով այս դերբայները կատարում են շարահյուսական տարբեր պաշտոններ (հմմտ. քնած երեխա, պայուսակը վերցնելիս հիշեց, որ…): Հետևապես վերլուծական դիմավոր ձևերի մեջ (կամ միայն բայական դիմավոր ձևերի մեջ) եմ օժանդակ բայի ձևերի հետ զուգորդվող բայական անդեմ ձևերը բնորոշվում են որոշակի քերականական մասնիկներով, ինչպես՝ -ում (անկատար՝ գր-ում, խաղ-ում), -ու (ապակատար՝ գրել-ու, խաղալ-ու), -ել (վաղակատար՝ գր-ել, խաղաց-ել), ի/ա (ժխտական՝ չեմ գրի, չեմ խաղա):

Եթե ընդհանրացնենք կախյալ դերբայ + օժանդակ բայ կառուցվածքները, կարող ենք ստանալ վերլուծական բայաձևերի հետևյալ ամբողջությունը, որ բաշխվում է տարբեր եղանակների միջև:

1. Անակատար դերբայով կազմություններ. *որտեղ օժանդակ բայի երկու ժամանակաձևեր զուգորդություն են կազմում դերբայական ձևի հետ. հմմտ. գրում եմ, գրում էի:*

2. Կատարելի դերբայով կազմություններ. *օժանդակ բայի երկու ժամանակաձևեր զուգորդություն են կազմում դերբայական ձևի հետ. գրելու եմ, գրելու էի:*

3. Վաղակատար դերբայով կազմություններ. *օժանդակ բայի երկու ժամանակաձևեր զուգորդվում են դերբայական ձևի հետ. գրել եմ, գրել էի:*

4. Հարակատար դերբայով (պակասավոր) կազմություններ. *օժանդակ բայի երկու ժամանակաձևեր զուգորդվում են դերբայական ձևի հետ. քնած եմ, քնած էի:*

Վերոնշյալ չորս (այլ մոտեցումով՝ երեք) դերբայներով կազմված վերլուծական ձևերը մտնում են սահմանական եղանակի մեջ՝ կազմելով ութ (այլ մոտեցումով՝ վեց) գլխավոր բաղադրյալ ժամանակաձևեր:

Բայական համակարգում օժանդակ բայի ժխտական ձևերի հետ զուգորդվում է նաև ժխտական դերբայը՝ կազմելով պայմանական կամ ենթադրական եղանակի ժխտական խոնարհման բայաձևեր՝ ապառնի և անցյալ. հմմտ. կգրեմ – չեմ գրի, կգրեի – չէի գրի:

Ըստ էության, բայական համակարգում դերբայ + օժանդակ բայ բաղադրիչներով ունենք տասը (այլ մոտեցումով՝ ութ) վերլուծական ձևեր:

Հայագիտության մեջ բայական վերլուծական ձևեր են դիտվում նաև բառ-մասնիկ+դիմավոր բայաձև կազմությունները: Այդպիսին են հրամայական եղանակի ժխտական խոնարհման (մի՛ խաղա, մի՛ խաղացեք), ինչպես նաև պիտի եղանակիչով կազմված հարկադրական եղանակի խոնարհված ձևերը (պիտի գրեմ-գրեի)[3]: Ներկա հոդվածում, սակայն, մենք անդրադառնալու ենք դերբայ + օժանդակ բայ վերլուծական բայաձևերի կաղապարների քննությանը:

Ընդհանրապես բառաձևերի կաղապարների նկարագրության հարցում կարևորվում է դրանց ձևաբանական հիմքի որոշումն ու առանձնացումը, որի կառուցվածքային տեսակներով էլ պայմանավորված են տվյալ հիմնակաղապարի մասնակաղապարները:

Հայագիտական բազմաթիվ ուսումնասիրություններում ըստ ամենայնի խոսել են համադրական բայաձևերի հիմքերի մասին, ցույց տվել նրանց տեսակները, կառուցվածքային առանձնահատկությունները, նրանց հարաբերակցող քերականական մասնիկները կամ վերջավորությունները և այլն[4]:

Բայական համակարգում վերլուծական ձևերի հիմքակազմու- թյան վերաբերյալ ակնարկներ հանդիպում են մասնագիտական գրականության մեջ: Հարցին անդրադարձել են Ա. Ղարիբյանը, Էդ. Աղայանը, Գ. Ջահուկյանը, Ռ. Իշխանյանը, Մ. Ասատրյանը, Հովհ. Նազարեթյանը և ուրիշներ: Բայական վերլուծական ձևերի մեջ նրանք շեշտել են անկախ դերբայների կիրառական

---

[3] *Տե՛ս* **Ջահուկյան Գ.,** *նշվ. աշխ., էջ 280-281:*

[4] *Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ 228, 330,* **Աղայան Էդ.,** *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1967, էջ 327-330,* **Ջահուկյան Գ.,** *նշվ. աշխ., էջ 158,* **Խաչատրյան Լ.,** *Լեզվաբանության ներածություն, Ե., 2008, էջ 218 և այլն:*

արժեքը՝ նշելով, որ այդ դերբայները օժանդակ բայերի խոնարհված ձևերի հետ կազմում են բաղադրյալ ձևեր, որոնք վերլուծական մակարդակում (դերբայները) կատարում են բայահիմքի դեր[5]*:*

Վերլուծական բայաձևերում եմ օժանդակ բայը համարվում է վերլուծական մասնիկ (թե՛ կազմության և թե՛ կապակցության առումներով):

Վերլուծական բայաձևերի քննության սկզբում պետք է հստակեցնել այն հարցը, թե այդ ձևերում լեզվաքերականական ինչպիսի տարրեր կարելի է առանձնացնել, թե վերլուծական ձևերն ինչպիսի բաղադրիչներից են կազմված, և թե այդ կարգի կազմություններում որոնք են հիմնական և երկրորդական ձևույթները: Այս հարցադրումների պատասխանները կարող են լուծել այն խնդիրը, թե բայական վերլուծական ձևերը կառուցվածքային ինչպիսի կաղապարներ ունեն. որն է նման բայաձևերի (կաղապարների) հիմնային բաղադրիչը, կառուցվածքային ինչ տեսակներ ունի կաղապարի հիմքը, և որոնք են վերլուծական կաղապարների քերականական (անջատական) մասնիկները:

Մենք կարծում ենք՝ վերլուծական բայաձևերի կաղապարների քննությունից առաջ պետք է ընդունենք քննության առարկա բայաձևերի ընդհանրական (ներլեզվական) կաղապարի առկայությունը՝ դերբայ + օժանդակ բայ կառուցվածքային տիպով, իսկ ամբողջ քննությունը միտված է պարզելու այդ կաղապարի հնարավոր դրսևորումները՝ դրա կառուցվածքային մասնակաղապարները բացահայտելու նպատակով:

Միաժամանակ, պարզ է, որ վերլուծական բայաձևերի կաղապարներում, իբրև կաղապարի հիմք, քննության ենք ենթարկելու վերլուծական ձևերի դերբայական բաղադրիչը: Հետևաբար հիմնային կաղապարի մասնակաղապարներն ստանալու համար պետք է պարզենք մեկ ուրիշ հարց. այսինքն՝ վերլուծական բայաձևերի դերբայական հիմքում ինչպիսի մասնիկներ են հնարավոր, որոնք պայմանավորում են հիմքի կառուցվածքային տեսակը: Առանց անհարկի մանրամասնությունների մեջ խորանալու՝ կդիտարկենք այն ընդհանրական ձևույթները, մասնիկներն ու վերջավորությունները, որոնք բնութագրական են դերբայական ձևերին՝ իբրև բայահիմքերի: Միևնույն ժամանակ, կաղապարի ձևայնացած նկարագրությունը հստակ կատարելու համար մենք բայաձևի հիմքի տարրերը կնշանակենք որոշակի նշույթներով. այդպես կարելի է վարվել նաև մնացած բառաձևերի (և բառակազմական քայլերի) կաղապարների քննության ընթացքում:

Ըստ այդմ, առանձնացնում ենք՝

---

[5] *Տե՛ս, մասնավորապես,* **Ղարիբյան Ա.,** *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Ե., 1954, էջ 256, Աղայան Էդ., նշվ. աշխ., էջ 211-212,* **Ջահուկյան Գ.,** *Ժամանակակից հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Ե., 1969, էջ 266,* **Իշխանյան Ռ.,** *Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Ե., 1971, էջ 58, 61, 96, 132,* **Ասատրյան Մ.,** *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Բ, Ե., 1973, էջ 208-211,* **Նազարեթյան Հովհ.,** *Ժամանակակից հայերենի բայական բառաձևերի հիմքերը («Հայագիտություն և գուգադրական լեզվաբանություն», պրակ Ե, Ե., 2006, էջ 64-70) և այլն:*

ա) բայի բառահիմք, որ ունի A նշույթը

բ) կերպածանց – b

գ) սեռի ածանց – d (կրավորական), d^1 (պատճառական)

դ) քերականական մասնիկ – a

ե) հիմքակազմիչ ածանց – e

զ) դերբայական վերջավորություն – c (անորոշ), c^2 (կատարելի)

է) զրո հիմքակազմիչ – e^0

ը) տարահիմքություն – s

թ) օժանդակ բայ – C:

Դերբայի կառուցվածքային այս տարրերը, որոնք պարտադիր էլ չէ, որ միաժամանակ հանդես գան մեկ դերբայի կառուցվածքում, կազմում են վերլուծական բայաձևերի հիմքը: Այսպես, դիտարկենք հետևյալ օրինակները՝ նրանց կաղապարները որոշելու և ցուցադրելու նպատակով: Ըստ այդմ, ինչպիսի կաղապարներ կունենան, ասենք, թռչում է և կարդացվել է վերլուծական բայաձևերը: Հասկանալի է, որ դերբայական հիմնային բաղադրիչի կառուցվածքային տարրերը պետք է փոխարինենք համապատասխան նշույթներով և ցույց տանք նրանց լեզվաքերականական կարգավիճակը (պարտադրականությունը և ոչ պարտադրականությունը): Թռչում է վերլուծական բայաձևի հիմքն է՝ թռչում անկատար դերբայը, որ բաղադրված է թ(ի)ռ-չ-ում բառաքերականական մասնիկներից: Համապատասխան նշույթներով կունենանք հետևյալ բանաձևը A(+e (+c)*), միաժամանակ, քանի որ* A *կարգի բաղադրիչը հանդես է եկել հնչյունափոխված ձևով, այն կունենա հատուկ նշույթ՝* <u>A</u>*: Վերոնշյալ հիմքը համապատասխան քերականական մասնիկներով հարաբերում է օժանդակ բային կամ* C *կարգի վերլուծական մասնիկին:*

Վերլուծական հիմք+քերականական մասնիկ կաղապարը թռչում է բայաձևի համար կունենա հետևյալ բանաձևը. [A (+e (+c))] + C*:*

Եթե բնութագրելու լինենք տվյալ կաղապարը, կարող ենք ասել.

ա) այն բավարարում է վերլուծական բայաձևերին՝ կախյալ դերբայ + օժանդակ բայ կառուցվածքով.

բ) կաղապարի դերբայական հիմքը եռանդամ է,

գ) բայի A *կարգի բառահիմքը հանդես է եկել հնչյունափոխված ձևով՝* <u>A</u>*,*

դ) բայահիմքում առկա են e *կարգի (հիմքակազմիչ) և* c *կարգի (դերբայական) մասնիկներ,*

ե) դերբայական հիմքը չի կարող հանդես գալ առանց e *և* c *կարգի մասնիկների,*

զ) C *կարգի մասնիկը եզրափակում է վերլուծական բայաձևի կաղապարը՝ նրան հաղորդելով համապատասխան քերականական իմաստներ (դեմք, թիվ, ժամանակ):*

Կարդացվել է վերլուծական բայաձևի հիմքն է կարդացվել վաղակատար դերբայը, որ կազմված է A *կարգի ձևույթից՝ բայի բառահիմքից,* a *կարգի*

քերականական մասնիկից (-աց), d *կարգի (բայասեռի) մասնիկից և* c *կարգի (դերբայական) վերջավորությունից: Ըստ բայի բառահիմքի և համապատասխան տարրերի դասավորության, բայաձևի դերբայական հիմքը կունենա այս բանաձևը՝* A (+a (+d (+c))), *որ զուգորդություն է կազմում* C *կարգի մասնիկի՝ օժանդակ բայի խոնարհված ձև(եր)ի հետ:*

Կարդացվել է վերլուծական բայաձևի կաղապարը կունենա այս բանաձևը՝ [A (+a (+d (+c)))] + C, *որ բնութագրվում է հետևյալ բնորոշ գծերով.*

ա) դերբայական հիմքը քառանդամ է. այն բաղադրված է A *կարգի ձևույթից,* a *կարգի (քերականական),* d *կարգի (բայասեռի) և* c *կարգի (դերբայական) մասնիկներից,*

բ) a *կարգի (քերականական) մասնիկը բազմիմաստ է. արտահայտում է անցյալ ժամանակ, դեմքի և թվի քերականական իմաստներ, այն միաժամանակ երկրորդ հիմքի (առրիստի) ցուցիչն է,*

գ) կաղապարում d *կարգի (բայասեռի) մասնիկի առկայությունը պարտադիր չէ,*

դ) կաղապարում a *կարգի և* c *կարգի մասնիկների առկայությունը պարտադիր է,*

ե) C *կարգի մասնիկը եզրափակում է վերլուծական բայաձևի կաղապարը՝ համապատասխան քերականական իմաստներով:*

Բավարարվենք վկայված բայաձևերի կաղապարների վերլուծությամբ և փորձենք ցույց տալ վերլուծական բայաձևերի պարզ (հիմքերով) կաղապարները՝ ելակետ ունենալով հիմքակազմիչ (կախյալ) դերբայները: Այդ կարգի վերլուծական բայաձևերի հիմնակաղապարները բացահայտելուց հետո կարող ենք անցնել նրանց հիմքերի (հիմքակազմիչ դերբայների) կառուցվածքային տեսակների քննությանը՝ տվյալ հիմնակաղապարի հնարավոր մասնակաղապարները ներկայացնելու համար:

Ընդհանրապես, եթե վերլուծական բայաձևերի դերբայական հիմքերը կազմությամբ պարզ են կամ թեկուզ բաղադրյալ՝ նույնատեսակ տարրերով, ապա բոլոր դերբայական հիմքերով կազմությունների համար կարելի է արտածել կառուցվածքային մեկ կաղապար: Արտահայտության պլանում բոլոր դերբայներով կազմված վերլուծական ձևերի համար տարբերակիչ ցուցիչ է համարվում դեր-բայական վերջավորությունը՝ c *կարգի նշույթը: Ըստ այդմ, որպեսզի վերլուծական բայաձևի կառուցվածքային կաղապարից հասկանալի լինի, թե ո՛ր դերբայական հիմքով է կազմված վերլուծական տվյալ ձևը, կփորձենք դերբայական (*c *կարգի) վերջավորությունները հատուկ տարրով նշութավորել՝ ելնելով կախյալ դերբայների ընդունված ավանդական կարգից (հաջորդականությունից): Այդպիսի մոտեցման դեպքում դերբայների վերջավորությունների համար կունենանք նշութավորման հետևյալ կարգը.*

1. c *– ել, ալ (անորոշ դերբայ)*

2. c^1 *– ում (անկատար)*

3. c^2 *– ու (կատարելի)*

4. c^3 *– ել, ացել (վաղակատար)*

5. c^4 *– ած (հարակատար)*[6]

6. c^5 *– ի /ա (ժխտական):*

Այժմ ցույց տանք կախյալ դերբայներով վերլուծական բայաձևերի հիմնակաղապարներն ու դրանց հնարավոր մասնակաղապարները, միաժամանակ կաշխատենք բնութագրել յուրաքանչյուր դերբայով ձևավորված մեկ կաղապարային բանաձև:

1. Անկատար դերբայի հիմքով վերլուծված բայաձևերի կաղապարներ. *երգում եմ-էի, խաղում եմ-էի.* [A (+ c^1)] + C*:*

Հնարավոր են կաղապարի հետևյալ իրացումները.

Ա. ա/ եցն + ում. վազեցնում եմ - էի, խաղացնում եմ - էի.

[A (+ ad^1 (+c^1))] + C

Բ. ցն + ում. փախցնում եմ - էի, թռցնում եմ - էի.

[A (+d^1 (+c^1))] + C *և* [<u>A</u> (+d^1 (c^1))]

Գ. վ + ում. շարժվում եմ - էի, գրվում եմ - էի.

[A (+d^1 (+c^1))] + C *և* [<u>A</u> (+d^1 (+c^1))] + C

Դ. ան /են /ն /չ + ում. լողանում եմ - էի, փախչում եմ - էի, մտնում եմ - էի.

[A (+e (+c^1))] + C *և* [<u>A</u> (+e (+c^1))] + C

Ե. ե /աց + վ + ում. կարդացվում է - էր, աղացվում է - էր.

[Aa (+d (+c^1))] + C

Զ. ատ/ ոտ/ կոտ + ում. ջարդոտում եմ - էի, կոտրատում եմ - էի.

[A (+b) (c^1))] + C *և* [<u>A</u> (+b) (c^1))] + C

Է. ատ /ոտ + վ + ում. ջարդոտվում է - էր, կոտրատվում է - էր.

[A (+b (+d (+c^1))] + C *և* [<u>A</u> (+b (+d (+c^1))] + C

Ը. չ + կոտ + ում. թռչկոտում է - էր.

[<u>A</u> (+e (+b (+c^1)))] + C*:*

Փորձենք բնութագրել անկատարի դերբայական հիմքով խաղացնում եմ-էի վերլուծական բայաձևերի [A (+ ad^1 (+c^1))] + C *կաղապարը և տալ նրա բնորոշ գծերը.*

ա) կաղապարի հիմքը քառանդամ կազմություն ունի. այն կազմված է բայական բառահիմքերի A *կարգի իմաստակիր ձևույթից, ներձուլված քերականական ու սեռանիշ* ad *մասնիկ (ներ) ից և դերբայական* c^1 *կարգի վերջավորությունից,*

բ) կաղապարում ad *ներձուլված մասնիկ(ներ)ի առկայությունը պարտադիր չէ. այն կարող է հանդես գալ առանց այդ մասնիկների՝ կորցնելով պատճառական սեռային առման կարգը.*

գ) կաղապարը եզրափակվում է C *կարգի մասնիկով (օժանդակ բայաձևով), որը կաղապարին հաղորդում է ժամանակի և դիմաթվային քերականական իմաստներ,*

---

[6] *Հարակատարի -ացած բաղադրյալ մասնիկով կառուցվածքները ժամանակային ձևեր չեն կազմում. դրանք հանդես են գալիս բաղադրյալ ստորոգյալի կազմում, իբր վերադիր:*

դ) առանց C *կարգի մասնիկի վերլուծական բայաձևերի կաղապարի իրացում հնարավոր չէ:*

Ժամանակակից հայերենում անկատարի դերբայական հիմքով վերլուծական բայերի հիմնակաղապարն ունի տասներեք մասնակաղապար[7]*:*

2. Կատարելի դերբայի հիմքով. *երգելու եմ-էի, խաղալու եմ-էի.* [Ac (+ c^2)] + C*:*

Հնարավոր են կաղապարի հետևյալ իրացումները.

Ա. (ե /ա) + ցն + ել + ու. խաղացնելու եմ - էի, նստեցնելու եմ - էի.

[A (a + d^1 (+c (+c^2)))] + C *և* [<u>A</u> (+a +d^1 (+c (+c^2)))] + C

Բ. ա.0 + ցն + ել + ու. փախցնելու եմ - էի, թռցնելու եմ - էի.

[<u>A</u> (+d^1 (+c (+c^2)))] + C *և* [<u>A</u> (+d^1 (+c + c^2))] + C

Բ. բ. վ + ել + ու. շարժվելու եմ - էի, գրվելու եմ - էի.

[A (+d^1 (+c (+ c^2)))] + C *և* [<u>A</u> (+d^1 (+c (+ c^2)))] + C

Բ. գ. ատ /ոտ +ել + ու. ջարդոտելու եմ - էի, կոտրատելու եմ - էի.

[A + (+b (+c (+c^2)))] + C *և* [<u>A</u> (+b (+c (+c^2)))] + C

Բ. դ. ն /չ + ել + ու. տեսնելու եմ - էի, փախչելու եմ - էի.

[A (+e (+c (+c^2)))]+ C

Գ. են /ան + ալ + ու. մոտենալու եմ - էի, հագենալու եմ - էի.

[A (+e (+c (+c^2)))] + C

Դ. աց + վ +ել + ու. աղացվելու է - էր.

[Aa (+ d (+c (+c^2)))] + C

Ե. ատ /ոտ + վ + ել + ու. ջարդոտվելու է - էր, կոտրատվելու է - էր.

[A (+b (+d (+c (+c^2))))] + C *և* [<u>A</u> (+b (+d (+c (+c^2))))] + C

Զ. չ + կոտ + ել + ու. թռչկոտելու է - էր.

[<u>A</u> (+e (+b (+c (+c^2))))] + C:

Փորձենք բնութագրել կատարելիի դերբայական հիմքով խաղացնելու եմ-էի վերլուծական բայաձևերի հետևյալ կաղապարը՝ [A (a + d^1 (+c (+c^2)))] + C *և ցույց տալ նրա բնորոշ գծերը.*

1) *կաղապարի դերբայական հիմքը հնգանդամ է, որտեղ՝*

ա) A *կարգի տարրը բայի բառահիմքն է (խաղ),*

բ) a *կարգի մասնիկը անցյալ կատարյալի հիմքի ածանցն է (աց),*

գ) d^1 *կարգի մասնիկը պատճառական սեռային առման ածանցն է (ցն),*

դ) c *կարգի մասնիկը անորոշ դերբայի վերջավորությունն է (ել),*

ե) c^2 *կարգի մասնիկը կատարելի դերբայի վերջավորությունն է (-ու),*

2) a + d^1 *մասնիկները հանդես են եկել ձուլված (համակցված ձևով)՝ աց + ցն > ացն:*

3) *Կատարելի դերբայի հիմքի կաղապարն է* A (a + d^1 (c)*), որ համընկնում է անորոշ դերբային՝ պատճառական սեռի իմաստով:*

---

[7] *Մասնակաղապարն ավելի լայն հասկացություն է, քան ժամանակային ձևը. մեկ մասնակաղապարը ներառում է տասներկու վերլուծական՝ եզակի-հոգնակի արտահայտության ձևեր:*

Ըստ այդմ, կատարելի դերբայի դերբայական հիմքով վերլուծական բայերն ունեն մեկ հիմնակաղապար, որ իրացվում է տասնչորս մասնակաղապարներում:

3. Վաղակատար դերբայի հիմքով.

Ա. (առաջին հիմքով). երգել եմ-էի. [A (+ c^3)] + C

Բ. (երկրորդ հիմքով). խաղացել եմ-էի. [Aa (+ c^4)] + C

Գ. (ռեական հիմքով). փախցրել եմ-էի. [A (+e^0 (+ d^1 (+c^3)))] + C:

Հնարավոր են Ա կաղապարի հետևյալ իրացումները.

1) վ + ել. շարժվել է - էր, գրվել է - էր.

[A (+d (+c^3))] + C *և* [<u>A</u> (+ d (+c^3))] + C

2) ատ /ոտ + ել. ջարդոտել է - էր, կոտրատել է - էր.

[A (+b (c^3))] + C *և* [<u>A</u> (+b (c^3))] + C

3) ատ /ոտ + վ + ել. ջարդոտվել է - էր, կոտրատվել է - էր.

[A (+b (+d (c^3)))] + S *և* [<u>A</u> (+b (+d (+c^3)))] + C

4) չ + կոտ + ել. թռչկոտել է - էր.

[[<u>A</u> (+e (+b (+c^3)))] + C:

Հնարավոր են Բ կաղապարի հետևյալ իրացումները.

1) 0 + ել. փախել է - էր, թռել է - էր.

[A (+e^0 (+c^3))] + C *և* [<u>A</u> (+e^0 (+c^3))] + C

1.ա. եկել է - էր.

[A^s (+c^3)] + C

2) ե /աց +ել. լողացել է - էր, մոտեցել է - էր.

[A (+a (+c^3))] + C

3) ե /աց + վ + ել. իմացվել է - էր, մոտեցվել է - էր.

[A (+a (+d (+c^3)))] + C:

Հնարավոր են Գ կաղապարի հետևյալ իրացումները.

1) ա /եց + ցր + ել. խաղացրել եմ - էի.

[A (+ad^1 (+c^3))] + C

2) 0 + ցր + ել. փախցրել եմ - էի, թռցրել եմ - էի.

[A (+e^0 (+ d^1 (+c^3)))] + C *և* [<u>A</u> (+e^0 (+d^1(+c^3)))] + C:

Փորձենք բնութագրել վաղակատարի դերբայական հիմքով մոտեցել է-էր վերլուծական բայաձևերի հետևյալ կաղապարը՝ [A (+a (+c^3))] + C *և ցույց տալ նրա բնորոշ գծերը.*

ա) վերլուծական բայի դերբայական հիմքը եռանդամ է, որ կազմված է բայի A *կարգի բառահիմքից,* a *կարգի քերականական մասնիկից (հիմնային ածանցից) և* c^3 *կարգի (դերբայանիշ) վերջավորությունից,*

բ) a *կարգի մասնիկները երկրորդ հիմքում հանդես են եկել ն/ց հերթագայությամբ՝ ձևավորելով բայի ցոյական հիմքը,*

գ) առանց a *կարգի մասնիկի (մասնիկների) կաղապարի իրացում հնարավոր չէ,*

դ) C *կարգի մասնիկը (օժանդակ բայը) եզրափակում է կաղապարը:*

Ընդհանուր առմամբ, վաղակատարի դերբայական հիմքով վերլուծական ձևերն ունեն մեկ հիմնակաղապար, որ հանդես է գալիս տասնհինգ իրացումներով կամ մասնակաղապարներով:

4. Հարակատար դերբայի հիմքով. *հոգնած եմ-էի.* [A (+ c^4)] + C*:*

Հնարավոր են կաղապարի հետևյալ իրացումները.

I հիմք + ած.

Ա. վ + ած. ավարտված է - էր.

[A (+d (+c^4))] + C,

ծածկված է - էր.

[<u>A</u> (+d (+c^4))] + C

Բ. ուց + վ + ած. կառուցված է - էր.

[Ad^1 (+d (+c^4))] + C

2. II հիմք + ած.

Ա. աց + ած. զարմացած եմ - էի, դառնացած եմ - էի.

[Aa (+c^4)] + C

Բ. 0 + ած. ընկած եմ - էի, կորած եմ - էի.

[A (+e^0 (+c^4))] + C:

Փորձենք բնութագրել հարակատարի դերբայական հիմքով կառուցված է-էր վերլուծական բայաձևերի հետևյալ կաղապարը՝ [Ad^1 (+d (+c^4))] + C *և ցույց տալ նրա բնորոշ գծերը.*

1) կաղապարի հիմքը քառանդամ է, որ բաղկացած է՝

ա) բայի A *կարգի բառահիմքից,*

բ) d^1 *կարգի (երբեմնի պատճառական) ածանցից,*

գ) d *կարգի (կրավորանիշ) ածանցից,*

դ) c^4 *կարգի (դերբայանիշ) մասնիկից:*

2) կաղապարում Ad^1 *կարգի բաղադրիչները հանդես են եկել միաձուլված կերպով,*

3) կաղապարը եզրափակվում է C *կարգի մասնիկով:*

Ընդհանուր առմամբ, հարակատարի դերբայական հիմքով վերլուծական ձևերն ունեն մեկ հիմնակաղապար, որ հանդես է գալիս հինգ իրացումներով կամ մասնակաղապարներով:

5. Ժխտական դերբայի հիմքով. *չեմ-չէի գրի, չեմ-չէի խաղա.* C + [A (+ c^5)][8]*:*

Հնարավոր են կաղապարի հետևյալ իրացումները.

1. ն /չ + ի. չեմ - չէի տեսնի, չեմ - չէի փախչի.

C + [A (+e (+c^5))]

1. ա. են /ան + ա. չեմ - չէի հագենա, չեմ - չէի մեծանա.

---

[8] *Հասկանալի է՝ չեմ օժանդակ բայի ժխտական ձևը բաղադրյալ մասնիկ է՝ չ + եմ, այն ներկայացնում ենք C կարգի ցուցիչով՝ ավելորդ ծանրաբեռնումից խուսափելու նպատակով:*

C + [A (+e (c^5))]

2. 0 + վ + ի. չեմ - չէի շարժվի. C + [A (+d (+c^5))]

չեմ - չէի գրվի. C *+ [A (+d (+c^5))]*

2.ա. ն + վ+ ի. չեմ - չէի տեսնվի.

C + [A (+e (+d (+c^5)))]

3. ատ /ոտ + ի. չեմ – չէի ջարդոտի, չեմ – չէի կոտրատի.

C + [A (+b (+c^5))] *և* C + [A (+b (+c^5))]

4. չ + կոտ + ի. չեմ - չէի թռչկոտի.

C + [A (+e (+b (+c^5)))]

5. ա /եցն + ի. չեմ - չէի խաղացնի, չեմ – չէի նստեցնի.

C + [A (ad^1 (+c^5))] *և* C + [A (+ ad^1 (+c^5))]

6. ա/եց + վ+ ի. չի - չէր իմացվի, չի - չէր իջեցվի.

C + [A (+a (+d (+c^5)))] *և* C + [A (+a (+d (c^5)))]

7. ր + վ + ի. չի - չէր տրվի.

C + [A^sa (+d (+c^5))]:

Փորձենք բնութագրել ժխտական դերբայի հիմքով չեմ-չէի տեսնվի վերլուծական բայաձևերի հետևյալ կաղապարը՝ C + [A (+e (+d (+c^5)))] *և ցույց տալ դրա բնորոշ գծերը.*

ա) C *կարգի մասնիկը նախորդում է վերլուծական բայաձևի հիմքին,*

բ) վերլուծական բայաձևի հիմքը քառանդամ է. այն կազմված է բայի A *կարգի բառահիմքից,* e *կարգի (հիմքակազմիչ) մասնիկից,* d *կարգի (սեռանիշ) ածանցից և* c^5 *կարգի (դերբայանիշ) վերջավորությունից,*

գ) c^5 *(դերբայանիշ) վերջավորությունը եզրափակում է կաղապարի դերբայական հիմքը,*

դ) կաղապարի իրացում հնարավոր է առանց d *կարգի (սեռանիշ) մասնիկի:*

Հետևաբար վերլուծական ձևերում ժխտականի դերբայական հիմքով առկա է մեկ հիմնակաղապար, որ իրացվում է տասներեք տարբեր կառուցատիպերով (մասնակաղապարներով):

Բայի վերլուծական ձևերի կաղապարային քննությունը կատարելիս պետք է ելակետ ունենալ վերոնշյալ հինգ դերբայները և նրանց վերաբերող բանաձևերը (հարակատարի վերաբերյալ, ինչպես նշել ենք, որոշակի վերապահություն պետք է ցուցաբերել):

Ի մի բերելով դերբայական հիմքերով վերլուծական բայաձևերի կաղապարների քննությունը՝ կարող ենք եզրակացնել, որ հայերենի դերբայներից յուրաքանչյուրը հանդես է գալիս մեկ հիմնակաղապարային կառուցատիպով, ընդ որում, ամեն մի կաղապար ընդհանուր առմամբ ցուցաբերում է մասնակաղապարային տարբեր իրացումներ: Ըստ այդմ, վերլուծական բայաձևերում կունենանք դերբայական հիմքով հինգ հիմնակաղապար, որոնք իրացվում են 13 (անկատար) +14

(կատարելի) +15 (վաղակատար) +5 (հարակատար) +13 (ժխտական) - 60 մասնակաղապարներով:

Անշուշտ, հնարավոր են նաև բայի դերբայական հիմքով վերլուծական բայաձևերի այլ մասնակաղապարներ ևս, սակայն քննարկված կաղապարային բանաձևերը, կարծում ենք, որոշակի գաղափար կարող են տալ այդ կառուցատիպերով վերլուծական ձևերի վերաբերյալ, որոնք զգալի դեր ու կշիռ ունեն արդի հայերենի բայական համակարգում: Մյուս կողմից՝ դերբայական հիմքերով վերլուծական ձևերի կաղապարների բացահայտումը որոշակիորեն կարող է ամբողջացնել հայերենի լեզվական միավորների ձևայնացած նկա-բագրության համապատկերը և լրացնել լեզվական կաղապարների քննության բացը:

МОДЕЛИ АНАЛИТИЧЕСКИХ ГЛАГОЛЬНЫХ СЛОВОФОРМ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ХАЧАТРЯН Л. М.

Резюме

Аналитические глагольные словоформы состоят из двух компонентов: причастная форма глагола + вспомогательный глагол. В таких конструкциях в роли морфологической основы выступают зависимые причастия. Для формального описания глагольных словоформ необходимо особыми показателями обозначить элементы причастных основ.

В свете соотношения причастных основ и безличных глаголов можно рассматривать следующие модели аналитических глагольных словоформ:

1. [A (+ c^1)] + C. երգում եմ-էի
2. [Ac (+ c^2)] + C. երգելու եմ-էի
3.ա. [A (+ c^3)] + C. երգել եմ-էի
3.բ. [Aa (+ c^4)] + C. խաղացել եմ-էի
4. [A (+ c^4)] + C. հոգնած եմ-էի
5. C + [A (+ c^5)]. չեմ-չէի գրի

Исходя из конструктивных факторов причастных основ аналитических словоформ, можно утверждать, что в современном армянском языке модели с основами причастий реализуются почти в шестидесяти микромодельных конструкциях.